ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. Բաղրամյան պող. 19, 0095, ք. Երևան Հեռ.՝ + 374 11 513 444

1.2/3666-2022

«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Կոստանյան,

Ծանուցում եմ Ձեզ առ այն, որ 2022 թվականի փետրվարի 10-ին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ>> ՍՊ ընկերության միջև (այսուհետ՝ Կատարող) ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/6 ծածկագրով կնքված, ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), սույն թվականի օգոստոսի 31-ից, համարվելու է միակողմանի լուծված, վերոնշյալ Պայմանագրի 2.1.3-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներին համապատասխան, քանի որ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին (հավելված 1.1) կից՝ <<պարտադիր պայմաններ>>-ի համաձայն, ծառայությունների մատուցման ժամանակ օգտագործվող բոլոր պահեստամասերը պետք է լինեն նոր և բարձրորակ, գործարանային փաթեթավորմամբ: Սակայն Կատարողի կողմից ծառայությունները մատուցվել են պայմանագրով ամրագրված պահանջների էական խախտմամբ, մասնավորապես, օգտագործված պահեստամասերով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով, պայմանագրի 7.8-րդ կետի համաձայն Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետք է հրապարակվի www.procurement.am կայքի համապատասխան բաժնում, նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

ՀՀ ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

VERIFIED BY CSP 02.09.2022 12:14:54 GMT+4

Signed by SHAHZRADYAN EDUARD 1807790185

ԷԴՈՒԱՐԴ ԽԱՆԶՐԱԴՅԱՆ